ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

<<ՀՀ-ՍՄԿՀ-ԷԱՃԱՊՁԲ-26/01>> ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Կապան 03 փետրվար 2026թ.

ժամը 12:00

Մասնակցում էին՝
հանձնաժողովի նախագահ՝ Արմեն Սարգսյան,
անդամներ՝ Արմինե Աբրահամյան, Նարինե Գասպարյան
քարտուղար՝ Լուսինե Ավետիսյան

<<ՀՀ-ՍՄԿՀ-ԷԱՃԱՊՁԲ-26/01>> ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացման և գնահատման մասին/շարունակություն/

(Ա. Սարգսյան)

1.Ընդունվել է ի գիտություն, որ 2026թ. փետրվարի 2-ին Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից ստացվել է պատասխան՝ գնման գործընթացը սահմանված կարգով շարունակելու և հետևյալ քայլերը պահպանելու մասին.

-նախքան պայմանագրի կնքումը հանդես գալ(Պատվիրատուի ղեկավարը) տվյալ իրավիճակում շահերի առկայության մասին հայտարարությամբ,

-հրապարակել և պահպանել հայտարարությունը համայնքապետարանի պաշտոնական կայքէջում,

-հրապարակված հայտարարության հղումը պատասխան գրությամբ ներկայացնել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով:

2.Հիմք ընդունելով <<Հանրային ծառայության մասին>> ՀՀ օրենքով սահմանված կարգով Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովից ստացված պատասխանը՝ հանձնաժողովը որոշեց.

2.1.հանձնաժողովի անդամների կողմից իրականացված գնահատման արդյունքների և գնահատման թերթիկների հիմքով բավարար գնահատված և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից <<Գրիգ-Բիզնես>> ՍՊԸ կողմից ներկայացված հայտը գնահատել բավարար և ճանաչել ընթացակարգի ընտրված մասնակից,

2.2.հաստատել էլեկտրոնային աճուրդի միջոցով պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը,

2.3.գնման ընթացակարգը շարունակել օրենքով սահմանված կարգով, ապահովել համապատասխան ծանուցումների և հայտարարությունների հրապարակումը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0

Հանձնաժողովի

Նախագահ ---------- Ա. Սարգսյան

անդամներ ---------- Ն. Գասպարյան

---------- Ա. Աբրահամյան

քարտուղար ---------- Լ. Ավետիսյան